Հարցաշար
«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ-2023
11-12-րդ դասարաններ - 120 րոպե

№ 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 X 4 = 2 միավոր)

1. Ինչպե՞ս է կոչվում Խոր Վիրապ վանական համալիրի կենտրոնական եկեղեցին.
(0,5 միավոր)

1) Սուրբ Աստվածածին
2) Ամենափրկիչ
3) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ
4) Սուրբ Տրդատ Մեծ

2. Ստորև թվարկվածներից ո՞րը Աշտիշատի ժողովում ընդունված որոշումներից չէ.
(0,5 միավոր)

1) Ժողովում որոշվեց սահմանել պատիժներ հարբեցողությունը, գողությունը և այլ հանցանքները արմատախիլ անելու մասին:
2) ճգնավորական կամ անապատական շարժումը հովանավորելու նպատակով ժողովում որոշվեց հիմնել վանքեր և կուսանոցներ:
3) Բարեգործական հաստատությունների ծախսերը հոգալու նպատակով ժողովում որոշվեց կաթողիկոսին կից ստեղծել հոգևոր խորհուրդ:
4) Եկեղեցին կրթված հոգևորականներով համալրելու նպատակով ժողովում որոշվեց եկեղեցիներին ու վանքերին կից բացել դպրոցներ:

3. Ի՞նչ են խորհրդանշում Խաչքարերի վրա պատկերվող հրեշտակը, առյուծը, եզը և արծիվը.
(0.5 միավոր)

1) Երվանդյան, Արտաշեսյան, Արշակունյաց և Բագրատունյաց արքայատոհմերին
2) Հայոց եկեղեցու հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան կողմերը
3) Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես ավետարանիչներին
4) Թադեոս, Բարդուղիմեոս առաքյալներին, Գրիգոր Լուսավորիչ կաթողիկոսին և Տրդատ Մեծ արքային

4. Ստորև թվարկվածներից ո՞ր իրադարձությունը տեղի չի ունեցել Վազգեն Ա. Պալճյան կաթողիկոսի գահակալման տարիներին. (0.5 միավոր)

1) Հայոց եկեղեցին դարձավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ
2) Հաստատվեց «Ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը»
3) Վերաբացվեց Սևանի դպրանոցը
4) Օշականում կառուցվեց Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

(1 x 4 = 4 միավոր)

5. ---------- տոնին, երեկոյան ժամերգությունից հետո, ռեհանով զարդարված խաչը հոգևորականները ժողովրդի ուղեկցությամբ դուրս են հանում բակ, պտտեցնում եկեղեցու շուրջը՝ օրհնելով աշխարհի չորս կողմերը: (1 միավոր)

6. 2016 թ. Հռոմի Ֆրանցիսկոս քահանայապետը ---------- կարգախոսով այցելեց Հայաստան: (1 միավոր)

7. Արևելքի առաջին տպարանը հիմնվել է ---------- վանքին կից: (1 միավոր)

8. «Երանի ----------, որովհետև նրանք Աստծո որդիներ պետք է կոչվեն»: (1 միավոր)

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ

(1 x 2 = 2 միավոր)

9. Համապատասխանեցնել. (1 միավոր)

1. Գրիգոր Տաթևացի
2. Լևոն Շանթ
3. Փավստոս Բուզանդ
4. Նաղաշ Հովնաթան
5. Ագաթանգեղոս
6. Եզնիկ Կողբացի
7. Անանիա Շիրակացի
8. Հովհաննես առաքյալ

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	

ա. «Ինքն ամեն ինչ պարունակում է, ամեն ինչի մեջ է, ամեն ինչից վեր է, ամեն ինչից դուրս է, ամեն ինչ նրանով է և ամեն ինչ նրա փառքի համար է»:

բ) «Մինչև որ ժողովուրդը չվարժվի անձնազոհության, չի ունենա իր ազատությունը, մինչև որ ժողովուրդը չվարժվի իր եսը ենթարկելու համայնքին, չի ունենա իր պետականությունը»:

գ) «Բարին երբեք չի մահանում, եթե մահանար աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ կյանք չէր լինի»:

դ) «Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն Աստծո համար է»:

ե) «Ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ»:

զ) «Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականությանը»:

է) «Մեղք է և հեշտ՝ գործել չարիք, վարձք և դժվար՝ գործել բարիք»

ը) «Լավ է մաքուր մտքով քնել, քան պիղծ խորհրդով աղոթել և իզուր չարչարվել»:

թ) «Աղոթքի սրբությունները երեքն են՝ սրտի, լեզվի և ձեռքերի, քանզի աղոթքը նրանց միջոցով է կատարվում»:

10. Կաթողիկոսի անունը համապատասխանեցնել նրա գահակալման տարիներին տեղի ունեցած իրադարձությանը: (1 միավոր)

1.	Ներսես Ե. Աշտարակեցի	1
2.	Մկրտիչ Ա. Խրիմյան	2
3.	Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի	3
4.	Նահապետ Ա. Եդեսացի	4
5.	Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի	5
6.	Հովհաննես Ը. Կարբեցի	6
7.	Եփրեմ Ա. Զորագեղցի	7
8.	Ղուկաս Ա. Կարնեցի	8

ա. Նրա գահակալության տարիներին Նիկոլայ I-ին կայսրը ժամանել է Հայաստան, Էջմիածնում այցելել գանձատուն, դպրոց, տպարան:

բ. Նրա օրոք կառուցվել են Վաղարշապատի Ս. Շողակաթ, Երևանի Կոնդի և Քանաքեռի եկեղեցիները:

գ. Նրա նախաձեռնությամբ Էջմիածնում ստեղծված ուսումնական հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկել յուրաքանչյուր գյուղում դպրոց բացելու ուղղությամբ և հրապարակել է հայկական ծխական դպրոցների առաջին ընդհանուր կանոնները:

դ. Նրա հանձնարարությամբ վերանորոգվել են Ս. Հռիփսիմեի, Խոր վիրապի, Հաղպատի, Սանահինի, Սևանի վանքերը, հիմնադրվել Ամերիկայի առաջնորդական թեմը:

ե. Նա դիմել է ռուսական կառավարությանը՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռը լուծարելու խնդրանքով:

զ. Նրա հորդորանքով Հարություն քահանա Մարտիրոսյանը Մադրասում սկսել է հրատարակել հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարարը»:

է. Նրա օրոք վերականգնվել են կանոնավոր հարաբերությունները Կ.Պոլսի Հայոց պատրիարքության հետ, որի արդյունքում Կ.Պոլսի նորընտիր պատրիարք Չուխաճյանի հրահանգով արևմտահայ բոլոր եկեղեցիներում սկսում են հիշատակել Ամենայն հայոց հայրապետի անունը:

ը. Նրա հանձնարարությամբ հաստատվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը և սահմանվել են ծխական և թեմական դպրոցների ծրագրերն ու կանոնագրերը:

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք

10. Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռանիստ վայրերի անունները դասավորել ըստ դրանց աթոռանիստ դառնալու հաջորդականության. (1 միավոր)

ա) Աղթամար
բ) Դվին
գ) Ծովք
դ) Շուղրի (Քեսունի) Կարմիր վանք
ե) Սիս
զ) Հռոմկլա
է) Անի
ը) Արգինա
թ) Կարս

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

№ 12 - 13

Աշխատանք սկզբնաղբյուրով

(1 x 4 = 4 միավոր)

11. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցերին. (2 միավոր)

«Հայոց … կաթողիկոսը շատ գեղեցիկ տեսք ուներ, մշտապես ոսկեհուռ զգեստներ էր հագնում և փառահեղ մորուքի վրա ոսկու փոշի էր շաղ տալիս: Արաբական Օմար խալիֆը, լսելով նրա գեղեցկության և իմաստության համբավը, նրան հրավիրում է իր մոտ՝ Դամասկոս: Տեսնելով հայոց կաթողիկոսի շքեղ տեսքը՝ արաբական խալիֆը զարմանում է և ասում. Ձեր Տեր Հիսուս Քրիստոս աղքատների հետ էր ապրում և համեստ զգեստներ էր կրում, իսկ դու շքեղ հագուստներով ու ոսկեզօծ մորուքով ես ներկայացել: Այդ ժամանակ … հայրապետը խալիֆին խնդրում է դուրս հանել իր պալատականներին և երբ մնում են մենակ, հանում է իր շքեղ զգեստներն ու ցույց տալիս դրանց տակից հագած վանական զգեստներն ու քուրձը: Տեսածից տպավորված խալիֆը մեծարում է հայոց կաթողիկոսին և արտոնություններ տալիս հայ ժողովրդին ու եկեղեցուն՝ ազատորեն քրիստոնեություն դավանելու և հարկերից ազատվելու»:

1) Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված հատվածը: (1 միավոր)

_____

2) Հայոց ո՞ր կաթողիկոսի մասին է խոսքը: (1 միավոր)

_____

12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին. *(2 միավոր)*

« … Այդ օրերին եկեղեցին վերապրում է մարդկության անցած ուղին՝ դրախտային երանավետ կյանքից, անհնազանդության անկումից մինչև Քրիստոսի հարությամբ պարգևած փրկության հուսառատ պահը, շնորհն ու օրհնությունը»:

1) Ի՞նչ է կոչվում այդ օրերի ամբողջությունը: *(1 միավոր)*

_____

2) Ի՞նչ իրադարձության են նվիրված այդ օրերը: *(1 միավոր)*

_____

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին: *(0,5 միավոր)*

Արևագալի, Գիշերային, Առավոտյան, Երեկոյան, Ճաշու 6-րդ ժամի, Ճաշու 9-րդ ժամի, Մթնշաղի, Խաղաղական, Հանգստյան

14.2 . Ի՞նչ սկզբունքով է կազմված աստվածաբան փիլիսոփաների շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: *(0,5 միավոր)*

Եսայի Նչեցի, Հովհան Որոտնեցի, Սիմեոն Ջուղայեցի, Գրիգոր Տաթևացի, Մատթեոս Ջուղայեցի, Առաքել Սյունեցի

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(0,5 միավոր)*

ա. Հոգևոր սուր, Ողորմած, Գետադարձ, Բարեպաշտ, Շինարար, Շնորհալի, Մեծ
բ. Վկայասեր, Գետադարձ, Բարեպաշտ, Շինարար, Շնորհալի, Հայրենասեր, Տղա
գ. Վկայասեր, Ապիրատ, Գետադարձ, Շինարար, Շնորհալի, Վշտակիր, Հայրենասեր

15.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված Հայոց եկեղեցու խորհուրդների ճիշտ շարքը:

(0.5 միավոր)

ա. Մկրտություն, Դրոշմ, Հաղորդություն, Ապաշխարություն
բ. Մկրտություն, Հաղորդություն, Կարգ Հիվանդաց, Ձեռնադրություն
գ. Մկրտություն, Հաղորդություն, Ապաշխարություն Պսակ կամ Ամուսնություն

15.3. Ի՞նչ սկզբունքով է կազմված հոգևոր գործիչների ճիշտ շարքը. ճիշտ շարքին ավելացնել առնվազն մեկ անվանում: *(1 միավոր)*

ա. Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Կորյուն, Եղիշե, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Ղազար Փարպեցի, Գրիգոր Նարեկացի, …
բ. Սահակ Պարթև, Ներսես Մեծ, Մովսես Խորենացի, Կորյուն, Ղազար Փարպեցի, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Նարեկացի, …
գ. Մեսրոպ Մաշտոց, Կորյուն, Ներսես Մեծ, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Նարեկացի, Ղազար Փարպեցի, Մխիթար Սեբաստացի, …

№ 16-17

Նկար-առաջադրանքներ

16.1 (0,5 միավոր)

16.2 (0,5 միավոր)

16.1 Ո՞վ է «Տիրամայրը մանկան հետ» կտավի հեղինակը:

_____

16.2 Ո՞վ է «Հովհաննես Ավետարանիչ և Պրոխորոն» մանրանկարի հեղինակը:

_____

17.1.(0,5 միավոր) *17.2. (0,5 միավոր)*

17.1. Ո՞ր եկեղեցին է պատկերված նկարում:

_____

17.2. Ո՞ր վանքն է պատկերված նկարում:

_____

18. Շարադրանք
(2 միավոր)

1. *Ո՞րն է Պատարագի առանցքը, նշել պատարագի մասերի անունները: Ե՞րբ է իր ավարտին հասել Պատարագամատույցի կազմավորումը: (0,5 միավոր)*
2. *Թվարկել Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական 9 աստիճանները: Ամուսնացած հոգևորականները մինչև ո՞ր աստիճանը կարող են ստանալ: Որո՞նք են Հայ Առաքելական Եկեղեցու՝ Հայաստանից դուրս այժմ գործող նվիրապետական աթոռները: (0,5 միավոր)*
3. *Թվարկել Հայ Առաքելական Եկեղեցու տաղավար տոները և նշել տարվա ընթացքում դրանց տոնման օրն ու ժամանակահատվածը: Ներկայացնել Սուրբ Հարության տոնը (Տոնի իմաստը, տոնակատարությունը): (0,5 միավոր)*
4. *Որո՞նք են ազգը բնութագրող առանցքային հատկանիշները և ներկայացրեք, թե ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ այդ հատկանիշներից որևէ մեկի (մի քանիսի) թուլացումը կամ կորուստը տվյալ ազգի համար: (0,5 միավոր)*